

ASSEMBLY OF ARMENIANS OF EUROPE

ԵՎՐՈՊԱՀԱՅԵՐԻ ՀԱՍԱԳՈՒՄԱՐ

Մամլոյ Հաղորդագրութիւն
REF: PR /04/03/006

Եվրոպահայերու Համագումարը կոչ կ'ընէ վերանայելու ՀԲԸՄիութեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակման որոշումը

Բրյուսել, մարտի 15, 2004 - Ատենէ մը ի վեր մամուլէն եւ Մելգոնեանի Սանուց Միութիւնէրէն կ'իմանանք թէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Մարմինը որոշած է փակել Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, որպէս առաջին քայլ փակելով Հաստատութեան գիշերօթիկ բաժինը, ինչ որ կ'առաջնորդէ հաստատապէս Կրթարանին վերջնական փակումին:

Անժխտելի փաստ է որ սփիւռքի տարածքին, հայ դպրոցը ամէնէն ամրակուտ ամբողջն է հայեցի ինքնութեան ու ոգիի պահպանման, մասնատրաբար համաշխարհայնացման մեր ժամանակներուն, երբ փոքր ժողովուրդներ կը գտնուին մշակութային միատարրացման եւ ազգային այլասերման հզօր յորձանքին դէմ յանդիման: Իսկ շուրջ 80-ամեայ հարուստ ասանդոյթ ունեցող Մելգոնեան Կրթ. Հաստատութիւնը կը նկատուի միջնաբերդը ազգակերտման ու ազգապահպանման սփիւռքի գաղթօճախներուն համար: Արդարեւ, Հաստատութիւնը՝ Եղեռնէն ետք, ղեկավար քատրերու եւ ազգային-հաստարակական ու մշակութային գործիչներու յաջորդական սերունդներ պատրաստած է համայն հայութեան համար:

Հաստատութիւնը փակելը վստահաբար շատ ծանր հետեւանքներ պիտի ունենայ ոչ միայն Կիպրոսի հայութեան, այլեւ Միջին Արեւելեան, Եւրոպական, նախկին Խորհրդային Միութեան թէ այլ երկիրներու հայութեան, ուրկէ Մելգոնեան կը յաճախեն ծագումով հայ պարման-պարմանուհիներ: Քանզի հայեցի կրթութեամբ միայն կարելի է հայ նորահաս սերունդները էապէս հաղորդ դարձնել իրենց մայրենի լեզուին, մշակոյթին ու պատմութեան եւ անոնց ներշնչել հայ մնալու գիտակցութիւնը եւ յանձնառութիւնը: Հոս ընդգծելու ենք նաեւ որ Եւրոպայի ամբողջ տարածքին՝ միակ հայկական կրթարանը Մելգոնեանն է, եթէ նկատի չառնենք վերջերս Ֆրանսայի մէջ հմինուած դպրոցը:

Հետեւաբար, նման որոշում մը լուրջ հարցականի տակ պիտի դնէր սկզբունքներն ու նպատակները Բարեգործականի ղեկավարութեան, որ տասնամեակներ շարունակ ստանձնած է Մելգոնեանի յանձնաձումը, հաւատարիմ մնալով հայապահպանման եւ հայակերտման իր նուիրական առաքելութեան:

Արդ, Եւրոպահայերու Համագումարը սրտագին կոչ կ'ուղղէ ՀԲԸՄիութեան ղեկավարութեան, որ ամբողջական պատասխանատուութեամբ անգամ մը եւս վերաքննէ իր որոշումը ի խնդիր համայն սփիւռքի գերագոյն շահերուն: Հակառակ պարագային, նման որոշումի մը գործադրումը պատմական շեղում մը պիտի նկատուի Բարեգործականի առաքելութենէն, անոր ենթադրած ամենաձանր հետեւանքներով: